

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ Հայ Աւետարանական Բեթել Եկեղեցիի, ուրախութիւնը ունինք յայտարարելու, թէ՛ Հայ Աւետ. «Արմիա» երաժշտանոցը իր դռները պիտի բանայ եւ վերսկսի նոր տարեշրջան մը:

Հայ Աւետ. «Արմիա» երաժշտանոցին մէջ կը դասաւանդուին՝ սոլֆեժ, դաշնամուր, կիթառ, ջութակ եւ Դլիսթ: Ուստի կ'ուզենք ինսցնել Ձեզի, թէ՛ երաժշտանոցի արձանագրութիւնները պիտի սկսին Երկուշաբթի 13 Սեպտեմբեր, 2010-էն սկսեալ, կէսօրէ ետք ժամը՝ 6.00-8.00, Հայ Աւետ. «Արմիա» երաժշտանոցի Գրասենեակին մէջ: Արձանագրութեան տարիքն է 7 տարեկան եւ վեր:

Հայ Աւետարանական «Արմիա» Երաժշտանոցի Տնօրէնութիւն

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ Տէր եւ Տիկ. Մարտիկ Թաթոյեան ընտանիքին, որոնք հիւրասիրեցին եկեղեցիին ժողովուրդը, Աիրակի 29 Օգոստոս, 2010-ին, քարոյի պաշտամունքէն ետք:

Rev. Haroutune Selimian
Armenian Evang. Bethel Church
Tel. & Fax 4642450
Aleppo- Syria

القس هاروتيون سليميان
كنيسة بيت ايل للأرمن البروتستانت
هاتف و فاكس 4642450
حلب - سورية

Հովիւ՝ Վեր. Յարութիւն Ճ. Սելիմեան
ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԵԼ ԵԿԵՂԵՑԻ
Հեռաձայն՝ 4467528, Հեռատիպ՝ 4642450
E-mail: armani@net.sy
Հալէպ-Սուրիա

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԵԼ ԵԿԵՂԵՑԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԻՐԱԿԻ 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2010

Շաբաթաթերթ ժԲ. Տարի Թիւ 32

ՀԱՒԱՏՔԻ ՈՍՏՈՒՄ

Աստուած ըսաւ. «Հիմա քու սիրած մէկ հատիկ որդիդ ... եւ հոն զանկա ողջակէզ ըրէ լեռներէն մէկուն վրայ, որ ես քեզի պիտի ցուցնեմ»: (Ծննդոց 22.2)

Մարդուն նկարագիրը կը բնորոշէ այն իրողութիւնը, թէ՛ ինչպէս կը մեկնաբանէ Աստուծոյ կամքը (Մաղմոս 18.25-26): Աբրահամ Աստուծոյ պատուէրը մեկնաբանեց որպէս թէ ինք իր որդին պէտք էր մեռցնէր, եւ կարող էր այս աւանդական հաւատքէն ձերբազատուիլ, միայն ուժեղ պատճառաւորութիւն մը միջոցով: Աստուած միայն այս ձեռով պիտի մաքրագործէր անոր հաւատքը: Եթէ մենք հնազանդիք Աստուծոյ պատուէրներուն, եւ Աստուծմէ մեզի յայտնաբերուած պատգամին, մեր անկեղծ հաւատքին չափով, Աստուած պիտի ազատագրէ մեզ բոլոր այն աւանդական հաւատքներէն, որոնք կ'աւաղաղեն Աստուծոյ մասին պատկերացումը: Բազմաթիւ այսպիսի հաւատքներ գոյութիւն ունին մեր առօրեային մէջ, որոնք ամբողջապէս պէտք է չքանան: Չօրինակ, այն տարածուած միտքը, թէ՛ Աստուած երախայ մը իր մօտ կ'առնէ, որովհետեւ անոր մայրը չափազանց կը սիրէ զինք, եւ ասոր նման այլ հաւատքի կերպարներ: Այս սատանային խաբէութիւնն է եւ Աստուծոյ բնութեան ճշմարիտ կերպարէն բաւականին հեռու: Եթէ սատանան կարողանայ արգելք ըլլալ, որ մենք բացարձակ հաւատքի ոստում կատարենք եւ ձերբազատուինք Աստուծոյ մասին մեր ունեցած սխալ աւանդական հաւատքներէն, այդպէս պիտի ընէ: Սակայն, եթէ մենք կառչած պիտի մնանք ճշմարիտ Աստուծոյ, Աստուած մեզ փորձաքարի պիտի ենթարկէ, որուն մէջէն մենք դուրս պիտի գանք աւելի ամբողջական եւ կատարեալ

գիտութիւն ունեցած Անոր մասին: Աբրահամի՝ Աստուծոյ վրայ ունեցած հաւատքին մեծագոյն դասը այն պիտի ըլլայ, թէ՛ ինք պատրաստուած էր Աստուծոյ համար որեւէ բան ընել:

Անիկա հոն ներկայ էր Աստուծոյ հնազանդելու համար: Չնայած իր հնազանդութեամբ իր սեփական ազատ կամեցողութենէն եւ զօրութենէն բաւական բան պիտի պակսէր: Աբրահամ նուիրուած եւ յանձնուած չէր իր սեփական համոզումներուն, ապա թէ ոչ անիկա Իսահակը պիտի մորթէր եւ ըսէր, թէ՛ հրեշտակին ձայնը իրականութեան մէջ սատանային ձայնն էր:

Այս ծայրայեղի մը ունեցած կեցուածքն է: Եթէ երբեք պիտի մնաս հաւատարիմ ճշմարիտ Աստուծոյ, Աստուած քեզ ուղղակիօրէն պիտի առաջնորդէ, փոխադրելով քեզ դժուար վիճակէ ուրիշ դժուար վիճակ եւ հասցնելով քեզ ուղղակիօրէն Աստուծոյ գիտութեան ներքնաստեանները: Սակայն, մնայուն կերպով կամեցողութիւնը ունենալու եւ գալու այն կէտին, որ քու սեփական համոզումները եւ աւանդական հաւատքները առաջնակարգ չսեպես:

Աստուծոյ մի հարցներ, որ քեզ փորձի դնէ: Աբրահամ ոչ մէկ յայտարարութիւններ ըրաւ, հապա պարզապէս մնաց հաւատարիմ՝ Աստուծոյ: Եւ շարունակաբար Աստուած մաքրագործեց անոր Հաւատքը:

Վեր. Յարութիւն Ճ. Սեյիմեան

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԵՐՄԷՍ

Շաբաթ 28 եւ Կիրակի 29 Օգոստոս, 2010-ին, երեկոյեան ժամը՝ 6.30-էն սկսեալ, Հայ Աւետ. Բեթել եկեղեցիին Պատանի-ասպետները կազմակերպած էին՝ «Ընտանեկան Բերմէս», եկեղեցիի շրջափակին մէջ: Յայտագիրը կ'ընդգրկէր երաժշտութեան ունկնդրում, քերմէսի յատուկ խաղեր եւ ուտեստեղէնի վաճառք: Ընտանեկան այս երեկոյները առիթ եղան հաղորդակցութեան, համախմբելով մեր եկեղեցիներու ընտանիքներն ու բարեկամները: Յատուկէն շնորհակալութեան եւ գնահատանքի խօսք՝ եկեղեցիի պատանի-ասպետներուն եւ Բ.Չ. երիտասարդներուն եւ բոլոր անոնց, որոնք իրենց անվերապահ եւ բոլորանուէր ծառայութիւնով եւ մասնակցութիւնով սոյն նախաձեռնութիւնը վերածեցին օգտաշատ ձեռնարկի:

ՊԱՏԱՆԻ – ԱՍՊԵՏՆԵՐՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Հայ Աւետ. Բեթել եկեղեցիի Պատանի-ասպետներու յանձնախումբի կազմակերպութեամբ, Չորեքշաբթի 1 Սեպտեմբեր, 2010-ին, կ.ե. ետք ժամը՝ 6.30-ին, թիւով 51 պատանի –ասպետներ հաւաքուեցան եկեղեցի, իրենց

առաջնորդ/ուհիներուն հետ մէկտեղ ուղղուելու դէպի **CARREFOUR (Shahba Mall)**, ունենալու երեք ժամուան գործունէութիւն: Խումբը ունեցաւ հաղորդակցութեան եւ գնումի պահ, որմէ ետք գործունէութեան աւարտին ունեցան պաղպաղակի հիւրասիրութիւն: Աստուծոյ փառք կու տանք այս գեղեցիկ առիթին համար:

JAZZ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԵՐԵԿՈՅ

Հովանաւորութեամբ՝ Սուրիոյ Հայ Աւետ. Համայնքի Համայնքապետ՝ Վեր. Յարութիւն Սելիմեանի, նախաձեռնութեամբ՝ Հայ Աւետ. Բեթել եկեղեցիի, Ուրբաթ 27 Օգոստոս, 2010-ին, երեկոյեան ժամը՝ 9:30-ին, տեղի ունեցաւ Jazz երաժշտութեան երեկոյ, Հայ Աւետ. Բեթել եկեղեցիի շրջափակին մէջ, կատարողութեամբ՝ Տիկ. Շողակաթ Աբարդեան-Սելիմեանի (Դաշնամուր) եւ Օր. Մարի Արապաճեանի (մեներգ): Երաժշտութեան երեկոյին ներկայ էին, Վերապատուելի Համայնքապետ Յարութիւն Սելիմեան, Հալեպի Չուիցերոյ Հիւպատոս՝ Տիար Փօլ Մուկարպանէ, հին Հալեպի քաղաքապետ՝ Տիար Ամմար Ղազալ, Հայ Աւետարանական Եկեղեցիներու ժողովուրդ եւ Հալեպահայ երաժշտասեր բազմութիւն: Ձեռնարկը սկսաւ Տիկ. Ազնիւ Արապաճեանի բացման եւ բարի գալուստի խօսքով հայերէն եւ Արաբերէն լեզուներով: Ապա հրաւիրեց օրուան երաժիշտները, որ ելոյթ գան, հրամցնելով՝ դասական Jazz երաժիշտներու կատարած յօրինումները եւ Շողակաթին վերամշակած հայկական դասական երաժշտութենէն կտորներ, ինչպէս նաեւ իւրայատուկ յօրինումներ՝ Տիկ. Շողակաթ Աբարդեան-Սելիմեանի: Ձեռնարկը վերջ գտաւ հովիւին գնահատական եւ շնորհակալական խօսքով: Սոյն ձեռնարկէն գոյացած եկամուտը պիտի օգտագործուի եկեղեցիի եկեղեցաշէնքի շինարարական ծրագիրներուն ի նպաստ:

**ԵՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ԱՏԱՅԱԾ ԵՆՐ
ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ
ՕԳՈՍՏՈՍ ԱՍՍՈՒԱՆ ԸՆԹԱՅՔԻՆ**

ԱՆՈՒՆ	ՆՊԱՏԱԿ
Տէր եւ Տիկ. Վարդան Պերթիպեան	Եկեղեցիին՝ եկեղեցաշէնքի շինութեան ծրագրին
Նապարեան ընտանիք	”
Տ. Տ. Ճորճ Եփրեմեան	”
Բժ. եւ Տիկ. Գէորգ Գրաճեան	”
Տ. Տ. Եղուարդ Մանուկեան	Կարիքաւոր ուսանողներու
Տ. Տ. Կարպիս Տանկուրեան	Եկեղեցիին՝ իրենց ծնողաց յիշատակին

Յարգելի Ծնողք,

Ուրախութիւնը ունինք յայտարարելու, թէ՛ Հայ Աւետ. Բեթել Եկեղեցիի Այրակնօրեայ Դպրոցը իր դռները պիտի բանայ եւ վերսկսի իր շրջան մը, Կիրակի 26 Սեպտեմբեր, 2010-էն սկսեալ: Կ'ուզենք տեղեկացնել ձեզի, թէ՛ Կիրակնօրեայ Դպրոցի պաշտամունքին տեսողութիւնը պիտի ըլլայ առաւօտեան ժամը՝ **9.30-11.15**: Փոքրիկները՝ պիտի լսեն Աստուծոյ եւ Անոր գործերուն մասին, պիտի սորվին սաղմոսներ, երգեր եւ պիտի դաստիարակուին քրիստոնէական եւ հայեցի շունչով: Նաեւ տեղի պիտի ունենան ձեռային աշխատանքի եւ կրօնաբարոյական դաստիարակչական շարժապատկերներու ցուցադրութեան պահեր:

Ուստի կը խնդրենք Ձեզմէ, որ ազնիւ ըլլաք ղրկելու Ձեր զաւակները ամէն Կիրակի առաւօտեան ժամը՝ 9.30-ին, Հայ Աւետ. Բեթել Եկեղեցի:

ԾԱՆՈԹ: Օրօքարի սպասարկութիւնը ապահովուած է:

**Հայ Աւետ. Բեթել Եկեղեցիի
Կիրակնօրեայ Դպրոցի
Ուսուցչակազմ՝**

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ Տէր եւ Տիկ. Լեւոն Պախչեճեան ընտանիքին, որոնք հիւրասիրեցին եկեղեցիին ժողովուրդը, Կիրակի 5 Սեպտեմբեր, 2010-ին, քարոյի պաշտամունքէն ետք:

Rev. Haroutune Selimian
Armenian Evang. Bethel Church
Tel. & Fax 4642450
Aleppo- Syria

القس هاروتيون سليميان
كنيسة بيت ايل للأرمن البروتستانت
هاتف و فاكس 4642450
حلب - سورية

Հովիւ՝ Վեր. Յարութիւն Տ. Սելիմեան
ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑԻ
Հեռաձայն՝ 4467528, Հեռատիպ՝ 4642450
E-mail: armani@net.sy
Հալէպ-Սուրիա

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԻՐԱԿԻ 12 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2010

Շաքարաթեքթա ԺԲ. Տարի ԹԻԽ 33

ՊԱՆԴՈՒԽՏՆԵՐԸ՝ ՅԱՌԱՋԱՆԱԼՈՒ ԵՆ

«Որպէս ՚ի դուք անփոյթ չըլլաք, հապա՛ նմանիք անոնց, որ հաւատքով ու համբերութիւնով խոստումները ժառանգեցին»
(Եբրայեցիս 6.12)

Այս համարը կ'ամփոփէ հիմնական պատգամը Եբրայեցոց ուղղուած նամակին: Իսրայէլ փախաբեցաւ Եգիպտոս վերադառնալ եւ իբրեւ արդիւնք ամբողջ սերունդ մը ձախողեցաւ ժառանգել այն ինչ որ Աստուած անոնց խոստացած էր: Անոնք Եգիպտոսի երկրէն ապահով դուրս եկան, սակայն, բնաւ չվայելեցին Բանանու երկրին հանգիստը: Մենք հաւատացեալներս այսօր նոյն սիւալին մէջ կ'իյնանք: Հետեւաբար, կան երեք նիւթեր, որոնք պիտի օգնեն մեզի հաւատքի կեանքի մէջ հասունութիւն ձեռք բերելու:

Հեղինակը կը բացատրէ Բրիստոսի երկնային քահանայութեան մասին առանց վտահ ըլլալու որ ՚ի նրա լսողները կը հասկնան ներկայացուած գիտութիւնը: Դժուարութիւնը այն չէ, որ ինք անհաղորդ եւ ձանձրացուցիչ ուսուցիչ է, հապա որ անոնք ծոյլ լսողներ են: Եբրայեցիս 5.11-ին մէջ, առաքեալը կ'աւելցնէ ըսելով. «Վասնչի ձեր լսելիքները բթացած են»: Այս ցոյց կու տայ հոգեւոր պաղուրեան եւ ծուլութեան իրավիճակը Աստուծոյ դաշտին մէջ ծառայողներուն: Հետեւաբար, հոգեւոր տհասութեան նշաններն են:

ա- Աստուծոյ խօսքին հանդէպ «անտարբերութիւն» (հմր. 11).

- բ- Բաժնեկցելու անկարողություն (հմր. 12).
- գ- Մանուկներու աննդականուն (հմր. 13).
- դ- Անպատրաստ՝ Աստուծոյ խօսքը գործածելու (հմր. 14):

Ոչ մէկը կարող է փախուստ տալ երեխայ ըլլալէ, որովհետեւ աշխարհ գալու միակ միջոցն է, սակայն ահաւոր է երբ երեխան ձախողի աճելու եւ մեծնալու մէջ:

Այսպէս է նաեւ Բրիտանացի հաւատացեալին կեանքը, ըմբռնելու հասկացողութիւնը, շարունակաբար Պօղոս առաքեալի յորդորը Եբրայեցիս 6.1-ին մէջ. «Ուստի, Բրիտանացի վրայով նախնական սորվելիքները ձգելով՝ կատարեալին գանք, առանց նորէն հիմ ձգելով մեռած գործերէն սպաշխարելու, առ Աստուած հաւատք ունենալու»: Կատարեալ ըլլալը Տէր Յիսուս Բրիտանացի կը վերաբերի, իսկ կատարելութեան ձգտիլը մարդուն կը վերաբերի:

Այսօր Եկեղեցին՝ շարունակաբար մարդկութիւնը, մնայուն վարձացումի եւ հասունութեան մէջ դրուելու է, Տէր Յիսուս Բրիտանացի կատարելութեան հասնելու եւ ձգտելու ջանքին մէջ:

ՎԵՐ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԵՆՏԵՆԱՆ

**ՊՍԱԿՈՒԵՑԱՆ
ԵԿԵՂԵՑԻԻ ԶԱՒԱԿՆԵՐԷՆ**

**Տիար Յովիկ Ռահաբ
Ձն**

Օր. Ճիւղի Տէր Աստուծոյ

Շաբաթ 4 Սեպտեմբեր, 2010, Բեասայ

**Եթէ Տէրը չչինձ տունը զուր տեղ կ'աշխատին անոր շինողները:
Սրտագին շնորհատրութիւններ եւ Աստուածային օրհնութիւն:**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
(Հիմնական Կրթութիւն եւ Երկրորդական)**

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԵ

Յարգելի՛ ծնողք,

Հայ Աւետ. Բեթէլ Երկրորդական Վարժարանը իր դռները պիտի բանայ Հայ աշակերտներուն առջև 2010-2011 դպրոցական տարեշրջանին ամբողջական ուսումնական ծրագիրով:

Վարժարանը մօտէն կը հետեւի Հայ աշակերտին հոգեմտաւոր կերտումին, ազգային եւ քրիստոնէական ուղիով:

– Համակարգիչի յատուկ դասաւանդութեան ծրագիր եւ համացանցի Կեդրոնի մատչելիութիւն:

– Աշակերտական յատուկ գրադարան – սերտարանի գոյառում:

– Տարրալուծարանի արդիական սարքաւորում եւ փորձ:

Ուշագրաւ է տեսնել մանկապարտէզի, նախակրթարանի եւ երկրորդական դասարանները օժտուած մանկավարժական արդիական սարքաւորումով եւ դաստիարակչական բովանդակ ծրագիրը՝ ժամանակակից չափանիշերով:

Ուստի, յատուկէն կոչ կ'ընենք բոլոր Հայ ծնողներուն, որ օգտուին Հայ Աւետ. Բեթէլ Երկրորդական Վարժարանին ընծայած առիթէն եւ դիմեն վարժարանին Տնօրէնութեան միտք պահելով, որ արձանագրութեան ներկայացուող աշակերտը ունենալու է % 85–է աւելի միջին այլ վարժարաններէ ներկայանալու պարագային: Արձանագրութիւնները տեղի կ'ունենան այժմէն, Երկուշաբթի եւ Երեքշաբթի օրեր առաւօտեան ժամը՝ 9:30-12:00:

**ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ Հայ Աւետարանական Բեթէլ Եկեղեցիի, ուրախութիւնը ունինք յայտարարելու, թէ՛ Հայ Աւետ. «Արմիս» երաժշտանոցը իր դռները պիտի բանայ եւ վերսկսի նոր տարեշրջան մը:

Հայ Աւետ. «Արմիս» երաժշտանոցին մէջ կը դասաւանդուին՝ սոլֆեժ, դաշնամուր, կիթառ, ջութակ եւ Ծլիթ: Ուստի կ'ուզենք ինսցնել Ձեզի, թէ՛ երաժշտանոցի արձանագրութիւնները պիտի սկսին Երկուշաբթի 13 Սեպտեմբեր, 2010-էն սկսեալ, կէսօրէ Ետք ժամը՝ 6.00-8.00, Հայ Աւետ. «Արմիս» երաժշտանոցի Գրասենեակին մէջ: Արձանագրութեան տարիքն է 7 տարեկան եւ վեր:

**Հայ Աւետարանական «Արմիս»
Երաժշտանոցի Տնօրէնութիւն**

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԻՐԱԿԻ 19 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2010

Շաբաթաթերթ ԺԲ. Տարի ԹԻԽ 34

ՏԵՐ ՅԻՍՈՒՍԻ ՀԱՍՏԱՏԱԿԱՄՈՒԹԻՒՆԸ

(Յովհ. 5.19-24)

Մեսիական թեկնածության նկատմամբ առաջին հարցումը որ միտք կուզայ, թե՛ որքանով թեկնածուին առաքելությունը ներդաշնակ է համընթաց է Աստուծոյ աշխատանքի ձեռնարկին եւ ծրագրներուն հետ: Եթէ Տէր Յիսուս Աստուծոյ մասին մեր գիտցած օրէնքներն ու սկզբունքները խափանէր, կասկածելու պատճառ պիտի ունենայինք, ինչպիսին են՝ հիմնապաշտ բարոյականութեան դէմ արտայայտութիւն, եւ պատուիրանքներու նոր շարան մը, որոնք կը հակասեն Աստուծոյ կողմէ նախապէս տրուած պատուիրանքներուն:

Կարգ մը մարդեր խորհեցան, թե՛ Տէր Յիսուս մերժեց հին պատուիրանքները: Անոնք դատապարտեցին զինք, իբրեւ Շաբաթը չպահող, որկրամոլ եւ արբեցող (Յովհ. 5.18, Մատթ. 11.19), սակայն Անհկա չեկաւ, որ օրէնքը խափանէ: Անհկա եկաւ, որպէս զի անոնց խօսքի, դպչելով անոնց: «Մի՛ կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մարգարէները արելու: Արելու չեկայ, հապա՛ կատարելու» (Մատթէոս 5.17): Եւ կամ ինչպէս այլ տեղ արտայայտուած է (Յովհ. 5.19)-ի մէջ, «...Որդին ինքնիրմէ բան մըն ալ չի կրնար ընել, միայն այն՝ ինչ որ Հայրը կ'ընէ. Վասնզի ինչ որ անհկա կ'ընէ, նմանապէս Որդին ալ նոյնը կ'ընէ»: «Ես եկայ», Տէր Յիսուս ըսաւ. (Յովհ. 10.10) « ... որ կեանք ունենան եւ ա՛լ աւելի ունենան»:

Աստուած մեռելներուն Աստուածը չէ, հապա կենդանիներուն (Մարկ. 12.27): Նկատի չառած Տէր Յիսուսի անձին հետ կապուած շատ մը խորհրդաւոր իրականութիւնները, ինչպէս անոր խորհրդաւոր Ծնունդը, արտասովոր իրաշքները եւ իրաշատար յարութիւնը, պէտք չէ գայթակղինք յստակ ճշմարտութիւններու վրայով: Տէր Յիսուսի հետեւիլը կեանք գտնել է:

Յարգելի Ծնողք,

Ուրախութիւնը ունինք յայտարարելու, թե՛ Հայ Աւետ. Բեթել Եկեղեցիի **Պիղակեօրեայ Դպրատան** իր դռները պիտի բանայ եւ վերսկսի իր շրջան մը, **Կիրակի 26 Սեպտեմբեր, 2010-էն սկսեալ**: Կ'ուզենք տեղեկացնել ձեզի, թե՛ Կիրակեօրեայ Դպրոցի պաշտամունքին տեսողութիւնը պիտի ըլլայ առաւօտեան ժամը՝ **9.30-11.15**: Փոքրիկները՝ պիտի լսեն Աստուծոյ եւ Անոր գործերուն մասին, պիտի սորվին սաղմոսներ, երգեր եւ պիտի դաստիարակուին քրիստոնէական եւ հայեցի շունչով: Նաեւ տեղի պիտի ունենան ձեռնարկն աշխատանքի եւ կրօնաբարոյական դաստիարակչական շարժապատկերներու ցուցադրութեան պահեր:

Ուստի կը խնդրենք Ձեզմէ, որ ազնիւ ըլլաք ղրկելու Ձեր զաւակները ամէն Կիրակի առաւօտեան ժամը՝ 9.30-ին, Հայ Աւետ. Բեթել Եկեղեցի:

ԾԱՆՈԹ: Օթոբարի սպասարկութիւնը ապահովուած է:

**Հայ Աւետ. Բեթել Եկեղեցիի
Կիրակեօրեայ Դպրոցի
Ուսուցչակազմ**

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ Տէր եւ Տիկ. Յարութիւն Բշխանեան ընտանիքին, որոնք հիւրասիրեցին եկեղեցիին ժողովուրդը, Կիրակի 12 Սեպտեմբեր, 2010-ին, քարոյի պաշտամունքէն ետք:

Rev. Haroutune Selimian
Armenian Evang. Bethel Church
Tel. & Fax 4642450
Aleppo- Syria

القس هاروتيون سليميان
كنيسة بيت ايل للأرمن البروتستانت
هاتف و فاكس 4642450
حلب - سورية

Հովիւ՝ Վեր. Յարութիւն ճ. Սելիմեան
ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑԻ
Հեռաձայն՝ 4467528, Հեռատիպ՝ 4642450
E-mail: armani@net.sy
Հալէպ-Սուրիա

Խոստովանինք, թե՛ ինչպես կեանքը փնտռելու եւ գտնելու ջանքին մէջ, մեր գորութեան կը վստահինք, երբեմն խորհելով, թե՛ ուրախութեան գաղտնիքը կը կայանայ ժողովրդականութեան մէջ, երիտասարդական բարձր կարողականութեան կամ դրամի եւ վայելչութեան մէջ:

Ուրախութիւնը կը գտնուի, ոչ թէ ընկերներ գրաւելու փնտռութիւն, հապա ընկեր ըլլալու վիճակին մէջ: Պիտի սկսինք մեր շուրջը եղած ճայները մտիկ ընել սորվիլ, հոգածու ըլլալ ուրիշներուն եւ սիրով հասնիլ անոնց կարիքներուն: Երբ սկսինք ապրիլ ուրիշներուն համար, մեր գաւաթը խիստ կը լեցուի:

Տէր Յիսուս բարութեան Տէրն է (Յովհ. 5.29): Անոնք, որ բարի գործեր են՝ կեանքի յարութիւն պիտի առնեն: Նոյնիսկ մահը կարող չէ բարութեան փառքը կասեցնել:

Տէր Յիսուսի պէտք է վստահիս, իբրեւ կեանքի եւ բարութեան աղբիւրը, որովհետեւ ապացոյցը յստակ է: Անոնք, որոնք Անոր սիրոյ ճամբուն մէջ կը կենան, կեանք կը գտնեն, սակայն անոնք որոնք եսամոլութեան ճամբուն մէջ կը կենան, մահուան եզրին վրայ կը շնջեն:

Վեր. Յարութիւն Ճ. Սելիմեան

JAZZ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԵՐԵԿՈՅ

Երեքշաբթի 14 Սեպտեմբեր, 2010-ին, երեկոյեան ժամը՝ 9:30-ին, Հայ Աւետարանական Բեթէլ Եկեղեցին կազմակերպեց Jazz երաժշտութեան երեկոյ, ի նպաստ՝ Բեթէլ Եկեղեցիի Եկեղեցաշէնքի շինութեան ծրագրին: Ձեռնարկը տեղի ունեցաւ Հայ Աւետ. Բեթէլ Եկեղեցիի շրջափակէն ներս, ներկայութեամբ՝ Վերապատուելի Համայնքապետ Յարութիւն Սելիմեանի, Հայ Աւետ. Բեթէլ Երկրորդական Վարժարանի Տնօրէնութեան եւ ուսուցչակազմին, բժիշկներու եւ երաժշտասէր բազմութեան: Ձեռնարկը սկսաւ Վերապատուելի Համայնքապետ Յարութիւն Սելիմեանի բացման ու ողջոյնի խօսքով, ուր Վերապատուելին հրաւիրեց Տիկ. Շողակաթ Աբարդեան-Սելիմեան (դաշնամուր) եւ Տիկ. Հուրի Աբարդեան-Ֆրիտլի (մենթրօ), լոյսը գալու դասական Jazz երաժիշտներու կատարած յորինումներով ու Տիկ. Շողակաթ Աբարդեան-Սելիմեանի վերամշակած հայկական դասական յորինումներով: Ներկաներ մէկ ու կէս ժամուան տեւողութեամբ ունկնդրեցին երաժշտական բարձրորակ յայտագիր:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ Հայ Աւետարանական Բեթէլ Եկեղեցիի, ուրախութիւնը ունինք յայտարարելու, թե՛ Հայ Աւետ. «Արմիս» երաժշտանոցը իր դռները պիտի բանայ եւ վերսկսի նոր տարեշրջան մը:

Հայ Աւետ. «Արմիս» երաժշտանոցին մէջ կը դասաւանդուին՝ սոլֆեժ, դաշնամուր, կիթառ, ջութակ եւ Ֆլույթ: Ուստի կ'ուպենք իմացնել Ձեպի, թե՛ երաժշտանոցի արձանագրութիւնները սկսած են Երկուշաբթի 13 Սեպտեմբեր, 2010-էն սկսեալ, կէսօրէ Ետք ժամը՝ 6.00-8.00, Հայ Աւետ. «Արմիս» երաժշտանոցի Գրասենեակին մէջ: Արձանագրութեան տարիքն է 7 տարեկան եւ վեր:

**Հայ Աւետարանական «Արմիս»
Երաժշտանոցի Տնօրէնութիւն**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Հիմնական Կրթութիւն եւ Երկրորդական)

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Յարգելի՛ ծնողք,

Հայ Աւետ. Բեթէլ Երկրորդական Վարժարանը իր դռները պիտի բանայ Հայ աշակերտներուն առջեւ 2010-2011 դպրոցական տարեշրջանին ամբողջական ուսումնական ծրագիրով:

Վարժարանը մօտէն կը հետեւի Հայ աշակերտին հոգեւնտաւոր կերտումին, ապգային եւ քրիստոնէական ուղիով:

– Համակարգիչի յատուկ դասաւանդութեան ծրագիր եւ համացանցի Կեդրոնի մատչելիութիւն:

– Աշակերտական յատուկ գրադարան – սերտարանի գոյառում:

– Տարրալուծարանի արդիական սարքաւորում եւ փորձ:

Ուշագրաւ է տեսնել մանկապարտէզի, նախակրթարանի եւ երկրորդականի դասարանները օժտուած մանկավարժական արդիական սարքաւորումով եւ դաստիարակչական բովանդակ ծրագիրը՝ ժամանակակից չափանիշերով:

Ուստի, յատուկէն կոչ կ'ընենք բոլոր Հայ ծնողներուն, որ օգտուին Հայ Աւետ. Բեթէլ Երկրորդական Վարժարանին ընծայած առիթին եւ դիմեն վարժարանին Տնօրէնութեան միտք պահելով, որ արձանագրութեան ներկայացող աշակերտը ունենալու է % 85-է աւելի միջին այլ վարժարաններէ ներկայանալու պարագային: Արձանագրութիւնները տեղի կ'ունենան այժմէն, Երկուշաբթի եւ Երեքշաբթի օրեր առաւօտեան ժամը՝ 9:30-12:00:

**ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆԻ
ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Յարգելի Ծնողք,

Ուրախութիւնը ունինք յայտարարելու, թէ՛ Հայ Աւետ. Բեթել Եկեղեցիի **Այգուակնօրեայ Դպրոցը** իր դռները բացաւ եւ վերսկսեցաւ նոր շրջան մը, **Կիրակի 26 Սեպտեմբեր, 2010-ին**: Կ'ուզենք տեղեկացնել ձեզի, թէ՛ Կիրակնօրեայ Դպրոցի պաշտամունքին տեսողութիւնը պիտի ըլլայ առաւօտեան ժամը՝ **9.30-11.15**: Փոքրիկները՝ պիտի լսեն Աստուծոյ եւ Անոր գործերուն մասին, պիտի սորվին սաղմոսներ, երգեր եւ պիտի դաստիարակուին քրիստոնէական եւ հայեցի շունչով: Նաեւ տեղի պիտի ունենան ձեռային աշխատանքի եւ կրօնաբարոյական դաստիարակչական շարժապատկերներու ցուցադրութեան պահեր:

Ուստի կը խնդրենք Ձեզմէ, որ ազնիւ ըլլաք ղրկելու Ձեր զաւակները ամէն Կիրակի առաւօտեան ժամը՝ **9.30-ին**, Հայ Աւետ. Բեթել Եկեղեցի:

ԾԱՆՈԹ: Օթոբարի սպասարկութիւնը ապահովուած է:

**Հայ Աւետ. Բեթել Եկեղեցիի
Կիրակնօրեայ Դպրոցի
Ուսուցչակազմ**

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ Տէր եւ Տիկ. Սարգիս Յարութիւնեան ընտանիքին, որոնք հիւրասիրեցին եկեղեցիին ժողովուրդը, Կիրակի 19 Սեպտեմբեր, 2010-ին, քարոյի պաշտամունքէն ետք:

Rev. Haroutune Selimian
Armenian Evang. Bethel Church
Tel. & Fax 4642450
Aleppo- Syria

القس هاروتيون سليميان
كنيسة بيت ايل للأرمن البروتستانت
هاتف و فاكس 4642450
حلب - سورية

Հովիւ՝ Վեր. Յարութիւն Ճ. Սելիմեան
ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑԻ
Հեռաձայն՝ **4467528**, Հեռատիպ՝ **4642450**
E-mail: armani@net.sy
Հալէպ-Սուրիա

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԻՐԱԿԻ 26 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2010

Շաբաթաթերթ ԺԲ. Տարի ԹԻԽ 35

ԴԷՊԻ ԱՌԱՋ ԾՐԱԳՐԵԼ

(ՅԱԿՈՒԲՈՒ 4.17-18)

Յակոբու 4-րդ գլուխին մէջ վեր կ'առնէ Աստուծոյ հետ պատերազմելու նիւթը եւ կ'աւարտէ իր խորհրդածութիւնները Աստուծոյ կամքին մէջ կենալու հասկացողութեամբ: Իսկութեան մէջ այս երկու վերնագրերը առնչուած են իրարու հետ: Երբ ոեւէ հաւատացեալ որոշէ կամ ծրագրէ մնալ Աստուծոյ կամքէն դուրս, ան կը վերածուի դժուարութիւն յառաջացնող անձի եւ ոչ խաղաղութիւն բերողի:

Ղովտ՝ տեղափոխուեցաւ Սողոմ եւ դժուարութիւն բերաւ իր ընտանիքին: Դաւիթ՝ շնութիւն ըրաւ եւ դժուարութիւն բերաւ իր ընտանիքին եւ իր թագաւորութեան: Իւրաքանչիւր պարագայի մէջ կար Աստուծոյ կամքին դիմաց սիսալ հասկացողութեան պարզացում:

Ակնյայտ ճշմարտութիւն է, որ Աստուած ծրագիր ունենայ մեզմէ իւրաքանչիւրին կեանքին համար: Ան իմաստութեան Աստուած է եւ զիտէ ի՛նչ եւ ե՛րբ տեղի պիտի ունենայ: Հետեւաբար, իբրեւ սիրող Աստուած Ան պիտի կամենայ լաւագոյնը Իր զաւակներուն ու Իրեն հաւատացող ժողովուրդին համար:

Այսօր բազմաթիւ քրիստոնէաներ Աստուծոյ կամքը կը դիտեն որպէս անհաճոյ դեղորայք, փոխանակ զայն տեսնելու իբրեւ Աստուծոյ անփոխարինելի սիրոյ ծրագիրը:

Յակոբու իր նամակին մէջ երեք տարբեր տեսակի կեցուածքներ պարզացուց Աստուծոյ կամքին նկատմամբ: Անշուշտ միայն մէկը շիտակ էր: Ինչ որտեղ, իւրաքանչիւր քրիստոնեայ մշակելու է իր կեանքին համար:

- ա- Անտեսել Աստուծոյ կամքը (Յակոբու 4.13-14,16)
- բ- Անհնապանդիլ Աստուծոյ կամքին (Յակոբու 4.17)
- գ- Հնապանդիլ Աստուծոյ կամքին (Յակոբու 4.15)

ա- Թերեւս այստեղ Յակոբ կը հասցէագրէ իր նամակը մեծահարուստ վաճառականներու, անոնք որոնք իրենց գործի ու վաճառականական համաձայնութիւնները հպարտութեամբ կը կատարեն: Այդտեղ չկայ որեւէ երեւոյթ աղօթքով Աստուծոյ կամքը փնտռելու իրենց ունենալիք որոշումներուն մէջ: Անոնք յաջողութիւնը կը չափէին իրենց յաջողութեամբ կատարած գործերուն ու ծրագիրներուն չափով: Սակայն Յակոբ 4 առարկութիւններ կը ներկայացնէ, որոնք կը յայտնաբերեն Աստուծոյ կամքը անտեսելու տգիտութիւնը:

- 1) Կեանքի բարդութիւնը հմր. 13
- 2) Կեանքի անստոյգ ըլլալը հմր. 14 ա.
- 3) Կեանքի կարճատեւութիւնը հմր. 14 բ.
- 4) Կեանքի տկարութիւնը հմր. 16

Ահա թէ ինչու մարդոց համար տգիտութիւն պիտի սեպուի Աստուծոյ կամքը անտեսել: Այդ կը նմանի առանց քարտէսի ճամբորդութիւն կատարելու, երբ կարելի է ունենալ կեանքի քարտէսը մեզ ապահով հանելու կեանքի դժուարութիւններու մէջ:

Վեր. Յարութիւն Ճ. Սելիմեան

ՊԱՏԱՆԻ-ԱՍՊԵՏՆԵՐՈՒ ՄԻՕՐԵԱՅ ՊՏՈՅՑ

Շաբաթ 18 Սեպտեմբեր, 2010-ին, Հայ Աւետ. Բեթել Եկեղեցիի Պատանի-ասպետներու յանձնախումբին կազմակերպութեամբ, թիւով 35 պատանի-ասպետներ առաւօտեան ժամը՝ 6:00-ին, իրենց առաջնորդներուն հետ մէկտեղ ողորուեցան դէպի Քեսապ, ճամբու ընթացքին ունենալով նախաճաշ եւ հանգիստի պահեր տեսարժան վայրերու մէջ: Ապա պատանիներ այցելեցին Միսաքեան Սշակութային Կեդրոն, ուրտեղ իրենց բացատրութիւն տրուեցաւ կեդրոնին պատմականին եւ կեդրոնէն ներս տեղի ունեցած գործունէութիւններուն մասին: Կեդրոնէն ներս պատանիներուն ներկայացուեցաւ երկու

նիւթեր՝ 1. Ինչպէ՞ս կարելի է գործադրել Տաւր պատուիրանները մեր կեանքերուն մէջ, ներկայացուց՝ Տիկ. Անի Պոյնուշաքեան 2. Մեր սորվածները իմաստութեամբ փոխանցել մեր շուրջիններուն, ներկայացուց՝ Օր. Դալար Մարաշլեան: Ապա խումբը ուղղուեցաւ դէպի «Սախրա» համալիր ունենալու հաւաքական ճաշ եւ ընկերային պահ, որմէ ետք ունեցան շրջապտոյտ մը դէպի «Սկիւրան», ուրտեղ տեղեկութիւն տրուեցաւ «թոնիքի հաց»ի պատրաստութեան մասին եւ պատանիներ հիւրասիրուեցան թոնիքի հացով: Աստուծոյ առաջնորդութեամբ խումբը վերադարձաւ երեկոյեան ժամը՝ 10:30-ին, շատ բարձր տրամադրութեամբ: Աստուծոյ փառք կու տանք այս պատեհ առիթին համար:

ՀԱԻԱՔՈՅԹ-ԸՆԹՐԻՔ

Երեքշաբթի 21 Սեպտեմբեր, 2010-ին, Երեկոյեան ժամը՝ 8.00-ին, Հայ Աւետարանական Բեթել Եկեղեցին հիւրընկալեց Ամերիկայի Միացեալ Նահանգներէն խումբ մը Դոկտորականի աշակերտներ, գլխաւորութեամբ՝ Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսթեանի (Սահազահ՝ Պէլրոթի Հայկապեան Համալսարանի): Հանդիպումին ներկայ էին՝ Վերապատուելի Համայնքապետ Յարութիւն Սելիմեան, Հ.Հ. Համալսարանականներու Շրջանաւարտից Միութեան վարչութիւն եւ հիւրեր: Խումբը նախ շրջեցաւ եկեղեցաշէնք, ուր ստացան համապատասխան բացատրութիւն եկեղեցիին պատմականին ու եկեղեցիէն ներս կատարուած ծառայութիւններուն մասին, որմէ ետք շրջափակին մէջ ունեցան հաւաքական ընթրիք, ընթացքին ներկաներուն ներկայացուեցաւ Սարդարապատ պարահումբէն խումբ մը երիտասարդներու կողմէ վեց պարեր (Արաբական եւ հայկական), մասնակցութեամբ՝ թմբուկի եւ Զուռնայի: Ապա խումբ մը պատանիներու կողմէ տեղի ունեցաւ Արաբական տարապնեւորութիւն: Շրջափակին մէջ պետեղուած էին նաեւ սեղաններ, ուրտեղ կը ցուցադրուէր հնաձեւ արաբական գոյքեր: Հանդիպումի աւարտին Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսթեան յատուկ շնորհակալութեան խօսք ուղղեց Վեր. Համայնքապետ Յարութիւն Սելիմեանին, կատարուած ջերմ հիւրընկալութեան եւ հիւրասիրութեան համար: Հանդիպումը վերջ գտաւ Վերապատուելի Համայնքապետ Յարութիւն Սելիմեանի փակման խօսքով: Հանդիպումէն ետք տեղի ունեցաւ հաղորդակցական պահ: Վերապատուելի Համայնքապետը նոյն խումբը ընդունեց Չորեքշաբթի 22 Սեպտեմբեր, 2010-ին, կ.ե. ժամը՝ 5:00-7:00, Եկեղեցիի գրասենեակին մէջ, ուրտեղ ներկայացուց երկու ժամուան դասախօսութիւն՝ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան կատարած ծառայութիւններուն, Արթական առաքելութիւններուն եւ աւետարանչութեան միջոցառումներուն մասին: Որմէ ետք խումբը ունեցաւ պրոյցի ապատ պահ եւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: